ՄՇԱԿՈՒՅԹ

ԱՐԱ ՀԱԿՈԲՅԱՆ
Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ արվեստի պատմության,
տեսության և մշակութաբանության ամբիոնի վարիչ,
արվեստագիտության թեկնածու, դոցենտ

ՀՏԴ 008(=19):75.04:94

ԲԱՐԵՆՊԱՍՏ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ ՀԱՅ ԾՈՎԱՆԿԱՐԻՉՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Բանալի բառեր. Ֆրանսիա, վաճառականներ, վարժարան, արվեստագետ, ծովանկարիչ, միություն:

Ключевые слова: Франция, купцы, училище, художник, маринист, объединение.

Key words: France, merchants, gymnasium, artist, painter of sea-scapes, union.

Արևմտյան Հայաստանից մի շարք շնորհալի հայ երիտասարդներ նկարչության մեջ կատարելագործվելու համար իրենց նոր տեղը գտան եվրոպական երկրներում: Հայ մշակույթի զարգացման գործում առավել բարենպաստ եղավ Ֆրանսիան[1]: Հիրավի, այն ավելի հյուրընկալ գտնվեց՝ դառնալով նրանց երկրորդ հայրենիքը:

Ֆրանսիայում հայերը առաջին անգամ հիշատակվում են VI դարից[2]: Դեռ 591 թվականին Տուր քաղաքի մայր եկեղեցում հյուրընկալվել է հայ Սիմոն եպիսկոպոսը: Փարիզի Սեն–Դընի արքայական դամբարանում հանգչում է Ֆրանսիայում մահկանացուն կնքած Կիլիկիայի հայոց թագավոր Լևոն Զ Լուսինյանի աճյունը: Բացի Կիլիկյան Հայաստանի թագավորների դիվանագիտական շփումներից՝ միջնադարում հայերը առևտրական կապեր են ունեցել ֆրանսիացիների հետ: Մի շարք ձեռագրագիտական աղբյուրներից տեղեկանում ենք, որ հայերը այդ շրջանում առավել զբաղվել են գորգերի վաճառքով: Փոխադարձաբար

[1] Եվրոպայի ամենակարևոր հայ գաղութի մասին տե՛ս Ֆրանսահայ Տարեգիրք, 1926, Ա տարի:

[2] Ֆրանսիայի հայերի մասին բավականին տեղեկություններ ենք քաղում Ժան Մաթորեզի հույժ կարևոր գրքից (տե՛ս J. Mathorez, Les Etrangers en France sous l'ancien régime. Histoire de la formation de la population Francaise, 1 vol., Les Causes de la pénétration des étrangers en France. Les Orientaux et les extra-européens dans la population Francaise. Paris, 1919, էջ 330–350):

ֆրանսիացիներն էլ Կիլիկիա էին բերում փարիզյան գոտիներ, հայելի, օճառ, ածելի և այլն:

Աստիճանաբար հայ վաճառականները հաստատվում են Ֆրանսիայի տարբեր վայրերում՝ Մարսել, Պրովանսի ծովեզրյա քաղաքներ, Տուլոն, Լիոն և այլն: Հատկապես Լիոնում մեծ գործունեություն են ծավալում մետաքսով զբաղվող հայ վաճառականները: Ղևոնդ Ալիշանը «Սիսական»–ի մեջ նշում է, որ Ջուղայի հայ վաճառականները դեռ 1570–ական թվականներից առևտրով են զբաղվել Եվրոպայում[3]:

XVII դարում հայ–ֆրանսիական մշակութային կապերի ամրապնդման գործում մեծ դերակատարություն է ունեցել կարդինալ Ռիշելյեն, որը Ֆրանսիայի նավարկության և առևտրի ընդհանուր նախարարն էր: Հայերի առևտրական գործունեությանը զարկ տալու համար Ռիշելյեի թույլտվությամբ արքունի տպարանում հրատարակվում են հայերեն գրքեր:

Մի շարք տվյալների համաձայն՝ 1672 թ. Պասքալ (Հարություն) անունով մի հայ վաճառական, սուրճ ներմուծելով Փարիզ, բացում է քաղաքի առաջին սրճարանը (café)[4]: Կան տեղեկություններ, որ Փարիզում և Վիեննայում սրճարաններ է բացել նաև Հովհաննես Աստվածատուրը (Յոհան Դիոդատո):

Ֆրանսիայում հայ գրատպության մեջ մեծ դերակատարություն է ունեցել Ոսկան Երևանցին: 1666–1668 թթ. Ամստերդամում տպագրելով հայերեն Աստվածաշունչ մատյանը՝ նա 1669–ին դիմում է Լյուդովիկոս XII թագավորին՝ թույլտվություն ստանալու ֆրանսիայում տպագրատուն բացելու համար: Վերջինիս դրական որոշմամբ 1672–1673 թթ. Մարսելում բացվում է առաջին հայկական տպարանը, որը գործում է մինչ 1710 թ.՝ հրատարակելով շուրջ երեսուն գիրք:

Ֆրանսիայի գրավիչ ու հրապուրիչ մայրաքաղաք Փարիզը դառնում է ուսումնասեր հայ երիտասարդների համար կրթական կենտրոն: 1669 թ. Կ. Պոլսում հիմնվում է ֆրանսիացի թարգմանիչների ուսումնական կենտրոն,

---

[3] Մետաքսյա իրերի վաճառքը առավել ակտիվացավ XVII դարում: Հայ վաճառականները Արևելքի երկրներից, հատկապես Հնդկաստանից Ֆրանսիա և այլ եվրոպական երկրներ էին բերել ասեղնագործած թաշկինակներ, շապիկներ, ծածկոցներ, տարբեր բամբակե և մետաքսե իրեր: Ընդլայնելով իրենց առևտրական գործունեությունը՝ նրանք Ֆրանսիա էին ներմուծել ադամանդներ և այլ թանկարժեք քարեր: (Նոր Ջուղայի հայ խոջաների մասին տե՛ս Հ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան, Նոր Ջուղա. Խոջայական ապարանքների գեղարվեստական հարդարանքը (XVII–XVIII դդ.), Եր., 2007):

[4] Մինչ այդ Պասկալը 1654–ին սրճարան էր բացել Մարսելում:

ասել է թե՝ դպրոց–վարժարան: 1700–1720 թթ. նմանատիպ վարժարան է ստեղծվում Փարիզում, և եթե Պոլսի վարժարանում արևելյան լեզուներ էին սովորում ֆրանսիացի երիտասարդները, ապա Փարիզի լեզվագիտական վարժարանում (Ecole des Jeunes de Langues) ուսանում էին մասնավորապես հայ երիտասարդները: Փարիզի լեզվագիտական վարժարանում սովորող երիտասարդներին կոչում էին «հայ», չնայած նրան, որ այդտեղ սովորողներից ոչ բոլորն էին ազգությամբ հայ: Սա վկայում է արևմուտքի և արևելքի ժողովուրդների մերձեցման գործում հայերի ունեցած դերի մասին: Իհարկե, ընդհանուր առմամբ սա դիվանագիտական մի քայլ էր հայ ուսյալ երիտասարդներին ֆրանսիական ոգով կրթելու, ֆրանսիական գաղափարների և Ֆրանսիայի հանդեպ սեր արթնացնելու համար[5]: 1798 թ. այստեղ արդեն գործում էր հայագիտության ամբիոնը, որի առաջին վարիչն էր լեզվաբան Շահան–Հակոբ Ջրպետյանը: Ցավոք, որոշ ժամանակ անց արգելվեց Արևելքի քրիստոնյաների ընդունելությունը. վարժարանում կարող էին սովորել միայն ֆրանսիացիները: Վերջիվերջո՝ 1873 թ. այն ձուլվեց Արևելյան կենդանի լեզուների վարժարանի հետ[6]:

Ազգային դաստիարակության և կրթության սքանչելի օրրան դարձավ 1846 թ. հիմնադրված Փարիզի Մուրադյան վարժարանը[7]: Այստեղ ուսման վեց տարիների ընթացքում կիրառվել են ֆրանսիական միջնակարգ դպրոցների ուսումնական ծրագրերը: 1855–ին Մուրադյան վարժարանից հեռացած հայեր Սարգիս Թեոդորյանի, Խորեն Գալֆայանի, Ամբրոսիոս Գալֆայանի և Հովհաննես Այվազովսկու եղբայր Գաբրիել Այվազովսկու ջանքերով Փարիզում հիմնվում է Հայկազյան վարժարանը, որն իր սկզբնական շրջանում կոչվում էր Արևելյան բազմալեզու ճեմարան: Այն

[5] Աշակերտներին ոգեշնչելու համար Ֆրանսիայի թագավորը մեկընդմեջ նրանց հրավիրում էր Վերսալ:

[6] Արևելյան կենդանի լեզուների վարժարանի, նրա պատմության և հայ սաների մասին տե՛ս J. Mathorez, Les Etrangers en France sous l'ancien régime, 2 vol., Paris, 1919–1921, նաև Փարիզի Արևելյան կենդանի լեզուների վարժարանի պրոֆեսոր Ֆրեդերիկ Մակլերի La France et l'Arménie, à travers l'Art et l'Histoire, Paris, 1917 և Mosaique Orientale, Paris, 1907 աշխատությունները: Բացի նշվածներից աշխատություններից՝ հայերի և ֆրանսիացիների մերձեցման մասին շարունակական հոդվածներ են տպագրվում Փարիզում հրատարակվող «Հառաջ» օրաթերթում (տե՛ս 1925 թ. օգոստոսի 16–ի, օգոստոսի 23–ի, սեպտեմբերի 6–ի, սեպտեմբերի 27–ի, հոկտեմբերի 18–ի և հոկտեմբերի 25–ի համարներում):

[7] Մի շարք աղբյուրներով վարժարանի պաշտոնական բացումը կայացել է 1849 թ.: Իսկ իր տարեկան մրցանակաբաշխությունը ղեկավարել է Ֆրանսիայի կրթության նախարարը:

գործեց մինչ 1859 թվականը: Վարժարանների ուսումնական ծրագրերի համաձայն՝ աշակերտները պարտադիր կարգով ուսանում էին նկարչություն:

1855 թվականից Փարիզում սկսում են հրատարակվել «Արևելք» և «Մասյաց աղավնի», ապա դարավերջում հաջորդում են «Փարիզ», «Արևմուտք», «Անահիտը», «Բանասեր» պարբերականները:

Ավելի ուշ հայազգի արվեստագետներին Ֆրանսիայում մնալու և ստեղծագործելու որոշմանը մեծապես նպաստեց տեղում ազգային գեղարվեստական միությունների կազմակերպումը:

Այսպես՝ 1926 թ. Փարիզում հիմնադրվում և մինչև 1930 թ. գործում է «Անի» հայ արվեստագետների խմբակցությունը: Այն 1927 թ. ցուցահանդես է կազմակերպում Փարիզի «Ժորժ Պտի» պատկերասրահում (Galeries Georges Petit), 1928 թ.՝ Բրյուսելում, ապա 1929թ.՝ Անտվերպենում, 1930թ.՝ կրկին Փարիզի «Ժորժ Պտի» պատկերասրահում[8]:

Խմբակցության գլխավոր նպատակն էր՝

ա. կապեր հաստատել Փարիզում և մյուս վայրերում բնակվող հայ արվեստագետների միջև,

բ. կազմակերպել հայ արվեստագետների ստեղծագործությունների ցուցահանդեսներ Փարիզում և այլ կենտրոններում,

գ. ստեղծագործական հարաբերություններ հաստատել եվրոպական նման միությունների հետ և փոխադարձաբար նպաստել հայ արվեստագետների գործունեության աշխուժացմանը Եվրոպայում,

դ. զարկ տալ հայ հին արվեստի ուսումնասիրությանը և աշխատել այն վերակենդանացնել արդիական ոգով,

ե. օգտակար լինել Հայաստանի գեղագիտական հաստատություններին,

զ. հետաքրքրվել հայ հասարակական այն ձեռնարկներով, որտեղ արվեստագետը դեր ունի կատարելու, և իր համեստ միջոցների սահմաններում նպաստել նրանց բարվոք իրագործմանը,

է. բարոյական ու նյութական աջակցություն ցուցաբերել հայ անփորձ արվեստագետներին:

---

[8] Իր ստեղծման տարում միության անդամների թիվը հասնում էր 19–ի, նախագահում էր Հովսեփ Փուշմանը, գանձապահ՝ տիկին Փուշման, քարտուղար՝ Սարգիս Խաչատուրյան, հրապարակագրական ներկայացուցիչ՝ Ռաֆայել Շիշմանյան, փոքր անց Փուշմանյանների Ամերիկա մեկնելու պատճառով նախագահի դերը ստանձնվում է հայ օֆորտի վարպետ Էդգար Շահինին, իսկ գանձապահի պաշտոնը՝ Հրանտ Ղազանչյանին:

Հետագայում Ռաֆայել Շիշմանյանի նախագահությամբ Փարիզում հիմնվում է Հայ ազատ արվեստագետների միությունը (1931–1947): Միությունը կազմակերպում է դասախոսություննեու ու ցուցահանդեսներ. առաջինը՝ 1931–ին Սնրի Մուրատ–Ռափայելյան վարժարանում, ապա՝ 1933, 1934, 1936, 1945 թվականներին[9]:

Եվրոպական, մասնավորապես ֆրանսիական միջավայրը դարձել էր հայազգի նկարիչների մշակութային հավաքատեղի: Ահա այս և մի շարք այլ բարենպաստ հանգամանքեր նպաստեցին ապագա մեծանուն ծովանկարիչներ Արսեն Շաբանյանին, Վարդան Մախոխյանին և Կարապետ Աղամյանին ընդմիշտ հաստատվելու այս երկրում՝ իրենց ստեղծագործական հանգրվանը գտնելով ծովեզրյա քաղաքներում:

Ա. Հակոբյան

Բարենպաստ հանգամանքեր ֆրանսիայում հայ ծովանկարիչների գործունեության համար

Ամփոփում

XIX դ. երկրորդ և XX դ. առաջին կեսերին հայ կերպարվեստի զարգացման գործում բարենպաստ հող դարձավ Ֆրանսիան:

Դեռ վաղ ժամանակներից հայ վաճառականները հաստատվում են Ֆրանսիայում: Ոսկան Երևանցու ջանքերով 1672–1673 թթ. Մարսելում բացվում է առաջին հայկական տպարանը: 1846 թ. հիմնադրվում է Փարիզի Մուրադյան, ավելի ուշ՝ Հայկազյան վարժարանը: 1855 թվականից Փարիզում սկսում են հրատարակվել մի շարք հայալեզու պարբերականներ: 1926 թ. Փարիզում հիմնադրվում է «Անի» հայ արվեստագետների խմբակցությունը, հետագայում՝ Հայ ազատ արվեստագետների միությունը:

Ահա այս և մի շարք այլ պարագաներ հիմք հանդիսացան ապագա մեծանուն ծովանկարիչներին մշտական բնակություն հաստատելով Ֆրանսիայում:

А. Акопян

Благоприятные условия для деятельности армянских маринистов во Франции

Резюме

Во второй половине XIX-го и первой половине и XX –го веков Франция стала благодатной почвой для развития армянского изобразительного искусства.

С давних времен во Франции жили и осуществляли свою деятельность армянские купцы. Стараниями Воскана Ереванци в 1672-1673 гг. открылась

[9] Միությունը չի գործել 1939–1945 թթ.:

первая армянская типография в Марселе. В 1846 году в Париже было основано армянское училище Мурадян а несколько позднее – Айказян. Начиная с 1855 года в Париже публикуется ряд армянских периодических изданий. В 1926 году в Париже образовалось творческое объединение художников "Ани", а позже - «Союз свободных армянских художников».

Благодаря этому фактору, как и ряду других благоприятных обстоятельств, армянские маринисты, получившие в будущем широкую известность, обосновались во Франции.

A. Hakobyan

Favourable circumstances for Armenian sea-scapes painters' activity in France.

Summary

France has begun a productive place for advancement of Armenian fine arts in the second half of XIX and the first half of XX centuries.

Beginning from earlier times, Armenian merchants started establishing in France. Thanks to Vorskan Erevantsi's efforts 1662 – 1673, the first Armenian print house was opened in Marseilles. In 1843 Muradyan and later Haykazyan gymnasiums were founded in Paris. A number of Armenian journals started publishing in France from 1855. In 1926 a union of Armenian artists group was founded in Paris, later renamed to "Armenian free artists union".

Mainly thanks to these and other circumstances, many Armenian see-scapes painters have settled and established their residency in France.